Արձանագրություն N 4
«ՋԿ–ՀԲՄԱՇՁԲ-20/6-Ա» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 օգոստոսի 2020թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Ալեյանը, Գ. Հունանյանը և Է. Մխիթարյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Բանակցությունների վերաբերյալ

Գեղարդալճի ինքնահոս համակարգի կառուցման շինարարական աշխատանքների «ՋԿ–ՀԲՄԱՇՁԲ-20/6-Ա» ծածկագրով ընթացակարգի հրավերի մասնակից ընկերությունները գնի նվազեցման շուրջ բանակցությունների հրավիրվել են 26.08.2020 թվականին ժամը 11:00-ին (Ջրային կոմիտե՝ ք. Երևան, Վարդանանց 13ա):

Բանակցություններին մասնակից ընկերությունները չեն ներկայացել: «Ղարաբաղցյան Շին» ՍՊԸ-ի և «Արփա-Սևան» ԲԲԸ-ի կողմից ստացվել են հաղորդագրություններ, որում նշվել է, որ ընկերությունների կողմից առաջարկված գները անփոփոխ են:

Հանձնաժողովի որոշումը

Հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ–ՀԲՄԱՇՁԲ-20/6-Ա ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Ղարաբաղցյան Շին» ՍՊԸ -ին,

2. «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի, «ԷՄՕՇԻՆ» ՍՊԸ և «Շինմաստեր» ՍՊԸ կոնսորցիումի, «Արտաշատի» ԷՑՇ-ի, «Շահարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են նախահաշվային արժեքից բարձր գին, ուստի ներկայացված հայտերը մերժել,

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակից «Ղարաբաղցյան Շին» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Անդամներ _____ Կ. Ալեյան

_____ Է. Մխիթարյան

_____ Գ. Հունանյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան